Լաբորատոր աշխատանք №3

Կերակրի աղի, և շաքարավազի նոսր և հագեցած լուծույթների պատրաստումը

Աշխատանքի նպատակը:

Սովորել, թե ինչպե՞ս է պետք պատրաստել նոսր և հագեցած լուծույթներ:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ:

Կերակրի աղ, շաքարավազ, ջուր, բաժակև չափիչ փորձանոթներ:

Աշխատանքի ընթացքը:

Այդ լուծույթները պատրաստելու համար անհրաժեշտ է վեցնել երկուբաժակ, ապա դրանցից յուրաթանչյուրի մեջ լցնել 100 գրամ ջուր: Այնուհետև բաժակներից մեկի մեջ ավելացնել քիչ քանակությամբ կերակրի աղ, իսկ մյուսում՝ շաքարավազ և խառնել: Այդ նյութերը ջրի մեջ լուծվելուց կստացվի թափանցիկ լուծույթ և եթե բաժակների հատակին չի նկատվում աղի և շաքարավազի բյուրեղներ, ապա այդ լուծութը կոչվում է նոսր: Նոսրլուծույթներն այն լուծույթներն են, որոնց մեջ որոշակի նյութ լուծելուց հետո ևս հնարավոր է լուծել տվյալ նյութի նոր բաժին: Հագեցած լուծույթ պատրաստելու համար անհրաժեշտ է վերոնշված բաժակների մեջ կրկին ավելացնել աղի և շաքարավազի նոր բաժիններ ու խառնել: Դա շարունակել այնքան ժամանակ մինչև բաժակների հատակին աղի և շաքարավազի բյուեղներ երևալը: Այն է, թե ջրի մեջ այդ նյութերի նոր բաժին չի լուծվում: Այդ լուծույթը կոչվում է հագեցած: